Հեղինակ՝ Քրիստինե Սահակյան

Խաղ «Սառեցրո՛ւ թեյը»

Նպատակ

- Ճիշտ շնչառության զարգացում (ներշնչում քթով, արտաշնչում բերանով),
- շրթունքների և լեզվի աշխատանքի, շարժունակության բարելավում,
- ուշադրության, ուշադրության պահպանման և մանր մոտորիկայի զարգացում:

Անհրաժեշտ պարագաներ

- Տպագրված բաժակների պատկերներ՝ գծիկներով (նույն նկարի նման),
- մկրատ,
- սոսինձ,
- ստվարաթուղթ (կոշտ թուղթ),
- ցանկության դեպքում՝ ձողիկ կամ թղթե խողովակ:

Ընթացք

1. Եզրագծով կտրել բաժակները և վերևի գծիկները:
2. Բաժակները սոսնձվում են ստվարաթղթի վրա, գծիկները մնում են շարժական:
3. Լոգոպեդը ասում է.
   – Թեյը շատ տաք է, փորձենք սառեցնել այն: Քթով շունչ քաշիր, բերանով փչի՛ր թեյը, որ գծիկները շարժվեն:
4. Երեխան կատարում է շնչառական վարժություն՝ փչելով գծիկների վրա, որպեսզի դրանք շարժվեն՝ նմանվելով գոլորշու շարժմանը:
5. Կարելի է փչելու ընթացքը զուգակցել ձայներով, օրինակ՝ արտաբերել «սսս», «222», «ֆֆֆ»: